

Թեմա 4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏ

Այսպիսով, երբ արդեն գիտենք, թե ինչ է բանկային հաշիվը, ուսումնասիրել ենք վճարային քարտի հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունը, խոսենք նաև այն մասին, **թե ի՞նչ օգուտներ կարող է ունենալ բիզնեսը դրանց օգտագործումից:**

1. Առաջինը անկանխիկ վաճառքներ կատարելու հնարավորությունն է:

2. Երկրորդը առցանց գնումներ կատարելու հնարավորությունն է:

Առցանց առևտուրը պարունակում է նաև ռիսկեր, որոնց առաջացման հավանականությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է հետևել այս հրահանգներին՝

- Համացանցի միջոցով գնումները կատարեք դրանց համար առանձնացված քարտով, որի վրա աշխատեք պահել այնքան գումար, որքան հարկավոր է ձեզ առևտուր կատարելու համար: Խուսափե՛ք այդ քարտերի վրա խոշոր գումարներ պահելուց, հնարավորության դեպքում օգտագործե՛ք քարտեր՝ առանց վարկային գծի հնարավորության:
- Ընտրե՛ք ապահով կայքեր, որոնք սկսվում են <https://> գրառումով, «կողպեքի» նշանով են, հասցեի կանաչ գրառումով և ապահովության այլ նշաններով:
- Միջազգային կայքերից օգտվելիս ճշտե՛ք, որ կայքերը լինեն հավաստագրված, ստուգված կամ ճանաչված, օրինակ՝ «Verified by VISA», «MasterCard Secure Code» և այլն:
- Կարդացեք նախկին օգտատերերի գրառումները, գտնվելու վայրի հասցեի առկայության դեպքում ստուգեք, օրինակ՝ Google Maps ծրագրով՝ արդյոք նման հասցե իրոք գոյություն ունի, և ինչ է գտնվում այդ հասցեում:
- Կայքերում ձեզ համար մուտքի գաղտնաբառ ընտրելիս և ձեր քարտը գրանցելիս ընտրեք ավելի բարդ գաղտնաբառեր. ներառեք մեծատառ, թվեր, նշաններ: Մի եղեք կանխատեսելի՝ գրելով հեշտ գուշակվող տեղեկատվություն:
- Ուշադիր եղեք վճարումից առաջ. ճշտեք ապրանքի վերջնական գինը, որը ներառում է միջնորդավճարները, առաքման գումարը, հարկերը և այլ լրացուցիչ ծախսեր:
- Մի տեղադրեք քարտի լուսանկարը հանրորեն հասանելի որևէ վայրում, օրինակ՝ սոցիալական ցանցերում: Մի՛ ուղարկեք քարտի նկարները սոցիալական հարթակներով կամ այլ կերպ:

- Համակարգիչը զերծ պահե՛ք համակարգչային «վիրուսներից» և վտանգավոր ծրագրերից: Մի՛ այցելեք կասկածելի կայքեր, պարբերաբար թարմացրե՛ք հակավիրուսային համակարգը:
- Եթե քարտը օգտագործում եք փոխանցումներ, վճարումներ կատարելու համար և հաճախակի գումար եք կանխիկացնելու, ապա ուշադրություն դարձրեք կանխիկացման միջնորդավճարին և սպասարկման տարեկան վճարին:
- Եթե նախատեսում եք առցանց գնումներ կատարել կամ պատրաստվում եք մեկնել արտասահման, ապա ուշադրություն դարձրեք, որ Ձեր քարտը լինի միջազգային և ունենա ցածր սպասարկման վճար:

Այսպիսով, ինչպես տեսանք, բանկային հաշվի առկայությունը հանգեցնում է անկանխիկ գործարքների իրականացմանը, որն էլ, իր հերթին, օգնում է զերծ մնալ կեղծ փողի շրջանառությունից, ստվերային գործարքներից, ժամանակ խնայել, ապահով գործարքներ անել և բազմաթիվ այլ առավելություններ ունենալ:

Օր առաջ սկսեք օգտվել ձեր և նաև բիզնեսի համար անկանխիկ գործարքների և բանկային քարտերի ընձեռած հնարավորություններից, իհարկե, նախապես հանգամանորեն ուսումնասիրելով բոլոր առավելություններն ու ռիսկերը: